Զանգեզուրի դէպքերը ահագին յուզում առաջ բերին դուրսը։ Գնդ. Հասկելի փոխանորդ գնդ. Ռէյը և բրիտանական ներկայացուցիչ Ուօրդրոպը չտապեցին պահանջել Հայաստանի ու Ադրբէջանի կառավարութիւններից՝ վերջ տալ արիւնհեղութեան և փոխադարձ համաձայնութեամբ լուծել Զանգեզուրի հարցը։ Մինչ Հայաստանը անմիջապէս տուեց իր համաձայնութիւնը, Ադրբէջանը սկզբում բաւական անդիջող դիրք բռնեց. «Զանգեզուրում պատերազմական գործողութիւններ չկան Ադրբէջանի կառավարութեան կողմից, պատասխանեց գնդապետ Ռէյին վարչապետ Ուսուպբէգովը, Զանգեզուրը Ադրբէջանի անբաժան մասն է... Ադրբէջանի կառավարութիւնը հարկադրուած էր զինուորական օգնութիւն ուղարկել Ղարաբաղի ընդհ.-նահանգապետին՝ կարգը վերականգնելու և հայ ապստամբների անիշխանական-բոլշևիկեան հրոսախմբերը ճնշելու նպատակով»։ Սակայն, պարտութեան լուրը առնելուց յետոյ փուքսը բաւական իջաւ, և նոյն Ուսուպբէգովը փութաց ընդունել գնդ. Ռէյի առաջարկը՝ նոյ. 20-ին, իր մօտ հանդիպում ունենալու Հայաստանի վարչապետի հետ։

Նոյեմբ. 20-ին տեղի ունեցաւ Խատիսեանի և Ուսուպբէգովի տեսակցութիւնը գնդ. Ռէյի առանձնասենեակում։ Երկու կողմերի բանակցութիւնները յանգեցին նոյեմբ. 23-ի համաձայնութեան, ըստ որի՝

«1. Հայաստանի և Ադրբէջանի կառավարութիւնները պարտաւորւում են դադարեցնել տեղի ունեցող ընդհարումները և նոր ընդհարումների չդիմել։

2. Հայաստանի և Ադրբէջանի կառավարութիւնները համաձայնւում են ձեռք առնել իրական միջոցներ բանալու և նորոգելու Զանգեզուր տանող ճանապարհները՝ խաղաղ երթևեկի համար։

3. Հայաստանի և Ադրբէջանի կառավարութիւնները պարտաւորւում են լուծել բոլոր վիճելի հարցերը, մէջը լինելով և սահմանավէճերը, խաղաղ համաձայնութիւնների ճանապարհով, մինչև յաջորդ յօդուածում նախատեսուած խորհրդաժողովի վճիռը։ Այն դէպքում, երբ կարելի չլինի հասնել խաղաղ համաձայնութեան, երկու կողմերը պարտաւորւում են իրաւարար ընտրել մի չէզոք անձնաւորութիւն, որի վճիռը պիտի լինի պարտադիր երկու կողմերի համար էլ։ Ներկայումս այդ անձը համարւում է Միացեալ Նահանգների բանակի գնդ. Ջէյմս Ս. Ռէյը։

4. Հայաստանի և Ադրբէջանի կառավարութիւնները պարտաւորւում են իսկոյն և եթ հաւասար թիւով պատգամաւորներ նշանակել, չորեքշաբթի, նոյ. 20-ին, Բաքւում գումարուելիք խորհրդաժողովի համար, որը պէտք է տեղափոխուի Թիֆլիս դեկտ. 4-ին, ուր կը շարունակուեն խորհրդաժողովի նիստերը, եթէ փոխադարձ համաձայնութեամբ պէտք չնկատուի այլ վայր փոխադրելու։ Այդ խորհրդաժողովը պիտի քննէ բոլոր այն հարցերը, որոնք վէճ ու բախում են առաջ բերում երկու կառավարութիւնների միջև, և լիազօրութիւն կունենայ լուծել այդ հարցերը համաձայնութեան կամ իրաւարարութեան միջոցով։

5. Սոյն համաձայնութիւնը համարւում է իրական ստորագրութեան օրից և մնայուն ոյժ կը ստանայ երկու պետութիւնների խորհրդարանների վաւերացումից յետոյ»։